

ԳԻՏՈՒԹՆԱՆ ԳՆԱՉԱՐԱՆ

Տրուս-վրացերէն հանրագիտական խոստարան հրատարակուած
 Ի. Տրոստոմաշվիլիի խմբագրութեամբ. գիրք I (A), II (B) եւ
 III (B), 1898—99 թ. Թիֆլիս.

Վրաց մէջ ներկայ պայմաններում նոր բան սկը-
 սելը շատ դժուար է, որովհետեւ նախ որ նոցա մէջ
 կրիտիկա չկայ և երկրորդ՝ դեռ ժողովուրդը ո՛չ պատ-
 րաստուած է և ո՛չ զարգացած նորութիւն ընդունելու:
 Կրիտիկայի բացակայութիւնը նամանաւանդ յայտնապէս
 երևում է նոցա գրականութեան մէջ, որտեղ անձնա-
 կան հաշիւները առաջին տեղն են բռնում. հարուստ,
 գիրք և ազդեցութիւն ունեցող մարդկանց թոյլ աշխա-
 տութիւնն անգամ գովասանքի է արժանանում և ընդ-
 հակառակ՝ անազդեցիկ և համեստ գործչի լաւագոյն աշ-
 խատութիւնն՝ անօգուտ ու ապարդիւն յայտարարում:
 Օրինակներ շատ ենք տեսնում վրաց թատրոնական բեմի
 վրայ, որտեղ ներկայացւում են գեղարուեստից և գրա-
 կան արժէքից զուրկ պիէսներ, բայց հետևեալ օրը
 վրաց լրագրիւնների մէջ կարդում ենք արտակարգ գովեստ-
 ներ:

Սակայն սոցանից չէ պ. Ռոստոմաշվիլին. նա ո՛չ
 իշխան է, ո՛չ ազնուական և ո՛չ էլ ազդեցիկ մարդ. նա
 մի զարգացած, փորձուած և համեստ ուսուցիչ է՝ և
 վրացերէն լեզուով ժողովրդական հանրամատչելի գիտա-
 կան գրքոյիներ հրատարակող: Սյդ է պատճառը, որ լի-
 շեալ «հանրագիտական բառարանը» ընդունելութիւն
 չգտաւ վրաց հասարակութեան կողմից, վրաց լրագրի-
 ները յարձակուեցոտն նրա վրայ, իսկ «Իվերիայի» մէջ
 (1898 թ. № 104, 105) «Մէգախլաւարը» (ես եմ) նրա
 բառարանը համարում էր անօգուտ ապարդիւն աշ-
 խատանք, որովհետեւ բառարանի առաջին խօսքերը ռու-
 սերէն լինելով ժողովուրդը չի կարող օգտուել, մոռա-
 նալով որ հանրագիտական բառարանը աւելի զարգացած
 դասակարգի համար է: «Մէգախլաւարն» ասում է, թէ
 զարգացած վրացին չի կարգայ և չի օգտուէ ռուս վրա-

ցերէն հանրագիտական բառարանից, այլ ուղղակի կը գիմէ բնագրին, որտեղից կազմել է սլ. Ռոստոմաշվիլին, բայց որտեղ կարող են այնքան տեղեկութիւններ գրանել վրացիների և հայերի մասին, որքան կան սլ. Ռոստոմաշվիլի «գիտութեան գանձարանի» մէջ, որը թէև ինչպէս և ամեն մի նոր գործ, ունի պակասութիւններ, բայց վրաց երիտասարդութեան մտաւոր զարգացման համար մի պատկառելի և օգտակէտ աշխատութիւն է: Վրացոց համար ներկայումս միմիայն այդ ձևի (ռուսերէնից-վրացերէն) հանրագիտական բառարան կարելի է հրատարակել, որով հեշտանում է ապագայում զուտ վրացերէն հանրագիտական բառարան կազմելու գործը, որովհետև նիւթը արդէն պատրաստ լինելով միմիայն հարկաւոր կլինի այբբենական կարգով դասաւորել, չէնց այդպէս էլ խոստանում է սլ. Ռ.:

Յիշեալ բառարանի թերութիւններից մէկն էլ այն է, որ Ա (I հատոր) և Ե (II հատոր) տառերի վրայ շատ քիչ տեղեկութիւններ կան հայերի մասին, մինչդեռ այդ ամենահարկաւոր էր դրացի ժողովրդի համար: Ընդամէնը երեսուն բառ, որոնց այստեղ բերելը աւելորդ չենք համարում. Абаръ, Агабабов Ник. (Հնդկաստանի հարուստ և բարերար հայ), Айвазовский Г. архіепископъ. Айвазовский П., Айриванъ. Авори-Арбури, Аламдаровъ А., Алашкертъ, Албанія (Սղուանք), Алхазовъ Іаковъ, (генералъ), Америкянъ Мигрдатъ, Ани, Ара, Аракель (պատմագիր), Араксъ (գետ), Арамъ, Араратъ (լեռ), Аргутинские-Долгорукіе, Арташесъ I, А. Седрабянъ, Арменія, Арташатъ, Арцивуріевъ постъ (առաջաւորաց պաս), Агцруни Г., Аршабиды въ Арменіи, Аптаракъ, Багратиды, Бастамянъ В. Архимандритъ, Башинджаганъ Г., Будагянъ К. (Պ. Բուրգի համալսարանի թուրքերէնի պրոֆէսոր): Սղք կազմուած են շատ համառօտ, օտար ազգիւրներից քաղուած և տեղտեղ էլ սխալ տեղեկութիւններով, ամենից շատ և ամենից լաւ խօսում է Անի քաղաքի և Արմենիայի (Հայաստանի) մասին:

Երրորդ հատորից՝ Ե տառ, սլ. Ռոստոմաշվիլին ըսկսեց բազմաթիւ տեղեկութիւններ հրատարակել իւր բա-

աւրանում Հայերի մասին, քաղուած զուտ հայկական աղբիւրներից, այդպէս էլ կը շարունակուի մինչև վերջ: «Գիտութեան գանձարանը» լի է, իրեն խմբագրի կազմած, վրացիների մասին տեղեկութիւններով: Առհասարակ թէ Հայերի և թէ վրացիների մասին տուած տեղեկութիւնները վերաբերում են նոցա թագաւորներին, վանքերին, գետերին, լեռներին, լճերին, բնակիչներին, կենդանիներին, և ազգային գործիչներին: Պ. հրատարակիչը իւր բառարանի համար շատ քիչ աշխատակիցներ ունի, գլխաւորապէս ինքն է կազմում Բրօկ հաուզի յայտնի հանրագիտական բառարանից, աստուածաբանական մասը յանձնուած է պ. Ա. Տատունաշվիլուն, իսկ հայկական բաժինը՝ տողերիս գրողին երրորդ հատորից (B ից):

Ամբողջ բառարանը բաղկացած պիտի լինի 15—16 հատորից մօտ 3100 մեծագիր երկսիւնակ երեսներից 8⁰ տառով տպուած, որոնք լոյս կը տեսնեն 3—4 տարուալ ընթացքում, գինն էլ մատչելի է, ընդամենը 12 ռ. Յիշեալ բառարանի օգուտներից մէկն էլ այն է, որ լիարար միջոցով վրացիք կարող են իրենց հարևան հայ ժողովրդի մասին ճիշտ գաղափար կազմել և մօտիկ ծանօթանալ նոցա կեանքի հետ:

Յանկալի է որ հայերն էլ մտածեն հայկական լեզուով հանրագիտական բառարան հրատարակելու մասին: Որքան մեզ յայտնի է մի քանի տարի առաջ արժ. Գիւտ ա. քահ. Աղանեանի նախաձեռնութեամբ նորա մօտ ժողովներ էին լինում հայկական հանրագիտական բառարան կազմելու մասին, բայց թէ ի՞նչ վախճան ունեցաւ գործը մեզ անյայտ է: Լսում ենք նաև թէ պ. Ա. Արասխանեանը երկար ժամանակ է, որ պարապում է այդ գործով և բաւական մաս էլ պատրաստ ունի: Եթէ ճշմարիտ է այս՝ ցանկալի է, որ օր առաջ լոյս տեսնէր այդ կարևոր աշխատութիւնը:

Դ ՏԷՐ-ԴԱԻԹԵԱՆԹ.